ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Արման Եղիազարյան

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հիմնաբառեր. *դավադրություն, իրադարձություն, Վասպուրականի իշխանություն, իշխանաց իշխան, Դերենիկ Արծրունի, սպանություն, մեղսակցություն, կառավարիչ, պատում, դավաճանություն:*

ՄՈՒՏՔ

906 թ. Երազգավորսում, որտեղ հայոց թագավոր Սմբատ Ա Տիեզերակալը (891-914 թթ.) հերթով հրաժեշտ էր տալիս աբխազական թագավորության դեմ հաղթական պատերազմին[1] մասնակից իշխաններին, Վասպուրականի տիրակալ Գագիկ Արծրունու (908 թվականից՝ թագավոր) եղբայր Գուրգենին տեղեկացրին, որ նրա հայր Դերենիկին (մահ.՝ 886 թ.) սպանել են Սմբատ Ա-ի հրամանով: Իշխանը զսպելով ցասումը՝ հանդիպեց թագավորին ու հայտնեց, որ հեռանում է Վասպուրական: Արքան էլ ծաղրանքով հրաժեշտ տվեց նրան: Գուրգենն արագորեն վերադարձավ Վասպուրական՝ եղբորը հայտնելու ցավալի լուրը[2]: Լուր, որ ի վերջո պառակտման դուռ էր բացելու հզորության գագաթնակետին գտնվող Բագրատունյաց թագավորության մեջ:

ԴԵՐԵՆԻԿ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԴԱՎԱԴԻՐ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

886 թ. աշնանը, իշխանական ձմեռոց մեկնելիս, Հերի արաբ ամիրայի զինվորները սպանեցին Վասպուրականի իշխան Դերենիկ Արծրունին[3]: Թեև սպանության կազմակերպումը վերագրում էին հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն (820-891 թթ.)[4], բայց նույնիսկ Արծրունյաց տան պատմիչները հավատ չէին ընծայում դրան, առավել ևս, որ Աշոտի դուստրը սպանված իշխանի կինն էր:

Աշոտ Բագրատունու կերպարը հույժ խորհրդանշական է հայ պատմագրության մեջ: Միջնադարյան Հայաստանում, որ մասնատված էր տարբեր մեծ ու փոքր իշխանական տների միջև, տեղական (երկրամասային) պատմագրությունը հանդես էր գալիս խիստ կողմնակալ դիրքերից, սակայն Աշոտ Բագրատունին այն եզակի գործիչներից էր, ում ընկալումն անկախ պատմիչների համակրանքներից ամենուր գովերգված է:

Թովմա Արծրունին, ով իր երկասիրությունը շարադրել է Դերենիկ Արծրունու հրամանով[5], Աշոտ Բագրատունուն գովեստով հիշող հիմնական հեղինակներից է, ըստ որում, եթե նույնիսկ կա փնովելու առիթ: Օրինակ, երբ Աշոտ իշխանաց իշխանը ձերբակալել էր Դերենիկին անհնազանդության համար, ըստ պատմիչի՝ «...առոգացեալ իմաստութեամբ իշխանաց իշխան...», ասել է՝ իշխանաց իշխան Աշոտը «փայլում էր իմաստությամբ», քանի որ ի վերջո Վասպուրականի իշխանին կնության էր տվել իր դուստր Սոփիին[6]: Մեկ այլ պարագայում, երբ արաբներն իշխանաց իշխան Աշոտի դեմ դավադրություն էին ծրագրում, պատմիչը գրում է, որ «...ելեալ իշխանաց իշխանն, որ բարձրագոյնն և հանճարեղագոյնն էր քան զբնաւ հայաստանեայս եւ զընդհանուր կացեալսս ի ներքոյ երկնից»[7]: Այսինքն, բացի այն, որ նա ավագագույնն էր Հայաստանում, նա նաև

---

* Հոդվածը ներկայացվել է 10.04.2020 թ., գրախոսվել՝ 23.04.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:

[1] Տե՛ս Եղիազարյան Ա., Հայոց Սմբատ Ա թագավորի աբխազական արշավանքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2010, № 1-2, էջ 119-130:

[2] Տե՛ս Անանուն Զրուցագիր (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), «Մատենագիրք Հայոց», Թ. հատոր, Թ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1050-1051:

[3] Տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա Արծրունի և Անանուն), «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 235-236:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 236:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 51:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 220:

[7] Նույն տեղում էջ 232:

իմաստնագույնն էր ոչ միայն այնտեղ, այլև «երկնքի ներքո բնակվողների մեջ»: Այնուհետև պատմիչը Աշոտին կոչում է «հոյակապն Աշոտ իշխանաց իշխան»[1]: Ի վերջո, խոսելով Աշոտ Բագրատունու մահվան մասին՝ Արծրունի հեղինակը նախ գտնում է, որ Աշոտ Ա թագավորի գահակալությունը (887-891 թթ.) եղել է «...քաջավայելչագոյնս զթագաւորութեանն կատարելագործեալ զժամանակն»[2]: Եվ այդ ամենն այն պարագայում, երբ Թովմա Արծրունին ծանոթ էր իշխանաց իշխան Աշոտի հրամանով Դերենիկ Արծրունուն սպանելու մասին լուրերին[3]: Դժվար է պատկերացնել, որ Արծրունյաց տան պատմիչը կարող էր կատարյալ գործերի ժամանակաշրջան համարել մի թագավորի գահակալությունը, եթե համոզված լիներ, որ հենց նրա հրամանով են սպանել իրեն Արծրունյաց տան պատմությունը շարադրելու հանձնարարություն տված իշխանին:

Դերենիկ Արծրունու սպանության հիմնական նկարագրություններից մեկը պահպանել է Թովմա Արծրունին: Ըստ նրա՝ Դերենիկ Արծրունին սպանվել է 886 թ. աշնանը, Հերի տարածքով ձմեռոց մեկնելիս: Նա պատմում է, որ Վասպուրականի իշխաններից ոմանք Դերենիկին զգուշացրել են, որ լուրեր են պտտվում, թե Աշոտ Բագրատունին շրջաբերական թղթով Դերենիկի դեմ դավադրություն է կազմակերպել: Նրան ասում էին՝ «թո՛ղ տեսցուք զելս այսր համբաւոց»[4], որից հետևում է, որ ո՛չ նրանք, ո՛չ էլ Դերենիկը այդ լուրերին չէին հավատացել: Իշխանները հորդորում էին սպասել, մինչև լուրը կճշգրտվի, բայց Դերենիկը կանգ չառավ: Այնուհետև, Հերի ամիրայության տարածքով անցնելիս, նա սպանվեց արաբ ամիրա (ըստ պատմիչի՝ Հերի քաղաքապետ) Ապլբերսի զինվորների կողմից[5]:

Հավելենք, որ Թովմա Արծրունուն հայտնի էր նաև, որ իշխանաց իշխան Աշոտի և Դերենիկի հարաբերությունների լարման մեջ դեր ուներ Պարտավի Յամանիկ ամիրան, ով հայոց իշխանների միաբանությունը իշխանաց իշխան Աշոտի հետ խարխլելու նպատակով վերջինիս կեղծ լուրեր էր ուղարկում, թե Դերենիկը ապիրատ[6] մտադրություններ ունի նրա դեմ. «Եւ արար՝ մինչ ճեղքեաց խզեաց զմիաբանութիւն Հայոց»[7],– ամփոփում է պատմիչը:

Կարելի է բխեցնել, որ Թովմա Արծրունին Դերենիկի սպանության կազմակերպումը Աշոտ Բագրատունու ձեռքով արժանահավատ չէր համարում:

Բացի Թովմա Արծրունուց՝ Դերենիկի սպանության մասին հիշատակում են նաև Հովհաննես Դրասխանակերտցին, Անանուն Զրուցագիրը և Արծրունյաց տան Անանուն պատմիչը:

Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, որ սկզբում Դերենիկը, որ Աշոտ իշխանաց իշխանի փեսան էր, «սակս այնորիկ հայրախնամ կամաւք եւ խոհական սիրելութեամբ միշտ խրատ բարեաց նմա մատուցաներ...: Բայց յետոյ ... ոչ անսայր բանի խրատու աներոյ իւրոյ՝ որպես յերէկն եւ յեռանդն, եւ չլինէր նմա այն յաջողումն ինչ ի բարութիւնս»[8], այսինքն՝ ինչ-որ պահից սկսած նա այլևս իշխանաց իշխան Աշոտին չէր հնազանդվում, որի հետևանքով, ըստ պատմիչի, հաջողությունից զրկվել էր: Այնուհետև նա ներկայացնում է Դերենիկի սպանությունը Հերում՝ պարզ է, որ առանց Աշոտ Բագրատունու մեղսակցության մասին որևէ նշումի[9]:

Դատելով Անանուն Զրուցագրի տեղեկություններից՝ Գագիկ Արծրունին ու նրա եղբայր Գուրգենը իրենց հայր Դերենիկի սպանությանը Բագրատունիների մեղսակցության մասին չգիտեին (ըստ հեղինակի՝ չէին հիշում) մինչև 906 թ., երբ Գուրգենը Վասպուրականի զորագնդով

---

[1] *Նույն տեղում, էջ 234:*

[2] *Նույն տեղում, էջ 238:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 236:*

[4] *Թովմա Արծրունի և Անանուն, էջ 236:*

[5] *Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 235-236:*

[6] *«Ապիրատ» բառի տարբեր բացատրություններ կան՝ «անպատեհ», «անարժան», «անիրավ», «չար» [տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. առաջին (Ա-Կ), Ե., 1979, էջ 176], բայց խնդրո առարկա դրվագում առավել իմաստալից են բառի «տիրադրուժ», «տիրանենգ» նշանակությունները (տե՛ս Գայայեան Յ. Թ., Բառարան գանձարան հայերէն լեզուի, Գ. տպագրութիւն, Գահիրէ, 1983, էջ 38):*

[7] *Թովմա Արծրունի և Անանուն, էջ 234:*

[8] *«Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց», «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 441-442:*

[9] *Տե՛ս նույն տեղում, էջ 444:*

Սմբատ Ա-ի զորքի կազմում մասնակցեց աբխազաց թագավորության դեմ հաղթական արշավանքին[1]: Այդ պատումը ներկայացնելիս Անանուն Զրուցագիրը տեղեկացնում է, որ Դերենիկին սպանել է տվել Սմբատ Ա-ն[2]: Դերենիկ Արծրունու սպանության պատճառ Անանուն Զրուցագիրը համարում է այն, որ Դերենիկը սիրային կապի մեջ էր Հերի ամիրա Ապումսրի դստեր[3] հետ, որի պատճառով էլ Սմբատ Ա-ն նրան սպանել տվեց ամիրայի որդիների միջոցով[4]: Ի դեպ, դա կա՛մ շփոթություն է, և Սմբատի անվան փոխարեն պետք է լինի նրա հայր Աշոտի անունը[5], ով Դերենիկի սպանության ժամանակ դեռ թագավոր չէր[6], կա՛մ Դերենիկի սպանությունը Սմբատ Ա-ին վերագրող Անանուն Զրուցագրի տեղեկությունից հնարավոր է թեականորեն հետևեցնել, որ Աշոտը կարող էր Դերենիկի սպանությունը կազմակերպել որդու միջոցով, իսկ Անանուն Զրուցագիրը շփոթել է ժամանակներն ու մինչ թագավորելը Սմբատի արածը վերագրել նրա գահակալության շրջանին: Անանուն Զրուցագիրը Սմբատին է վերագրել նաև հետևյալ խոսքերը. «[Դերենիկին] ... ես ետու սպանանել որդոցն Ապումսրայ»[7]: Բացի այդ, Սմբատ Ա-ն Դերենիկի երեք որդիներին՝ Աշոտին, Գագիկին և Գուրգենին ձերբակալած Վասպուրականի վերակացու Գագիկ Ապումրվան Արծրունու դեմ օգնություն աղերսող քրոջը, ով սպանված իշխանի այրին էր, իբր պատասխանել է. «մի լայր, թող մեռան զորդիքդ քո, զի աւձին ցագն լաւ է սպանանել, որ ոչ վիշապանան»[8]: Ճիշտ է՝ հեղինակի ներկայացրածը սխալաշատ է, քանի որ Գագիկ Ապումրվանի կողմից Արծրունի երեք եղբայրներին ձերբակալելը ներկայացված է որպես սպանություն, Սոփին ներկայացված է Հրանուշ անունով, և իբր թե Աշոտ Արծրունին կապանքների մեջ մեռել է Նկան ամրոցում[9], բայց պարզ է, որ Սմբատ Ա-ն խիստ անբարեհաճ էր տրամադրված Արծրունի եղբայրների նկատմամբ:

Հավելենք նաև, որ ըստ պատմիչի, թեև մահվանից քիչ առաջ Դերենիկը բանտարկել էր տվել Գագիկ Ապումրվանին, վերջինս նրան համոզել է չմեկնել Հեր, քանի որ այնտեղ շատ է արյուն թափվել, բայց Դերենիկն ականջալուր չի եղել[10]:

Ինչ վերաբերում է Արծրունյաց տան Անանուն պատմիչի տեղեկություններին, ապա դրանց կանդրադառնանք Դերենիկի սպանության վերաբերյալ հետազոտողների տեսակետներին անդրադարձից հետո, քանի որ դրանք դուրս են մնացել նրանց տեսադաշտից և լիովին լույս են սփռում դավադրության վրա[11]:

Դերենիկ Արծրունու մահվան հանգամանքները նախկինում բավարար խորությամբ չեն ուսումնասիրվել: Մ. Չամչյանցը և Մ. Օրմանյանը Դերենիկի սպանության պատճառ են համարել նվաճված Հերի և Զարևանդի արաբ տերերի վրեժխնդրությունը, իսկ դավադրությանն Աշոտ

---

[1] *Տե՛ս Անանուն Զրուցագիր, էջ 1050:*

[2] *Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 236:*

[3] *Կարծիք է հայտնվել, որ Դերենիկը սիրահետում էր ամիրայի քրոջը (տե՛ս Հարությունյան Բ., Արծրունյաց իշխնական ընտանիքը հայոց պատմության մեջ, Ե., 2016, էջ 152), սակայն այդ մասին պատմող միակ հեղինակը՝ Անանուն Զրուցագիրը, գրում է Ապումսր ամիրայի դստեր մասին: Հավանաբար, ամիրայի քրոջ մասին տեսակետը հետևանք է այն բանի, որ, երբ Սմբատը իմացավ Ապումսրի դստեր հետ Դերենիկի կապի մասին, գրեց Ապումսրի չորս որդիներին՝ հանձնարարելով սպանել Դերենիկին (տե՛ս Անանուն Զրուցագիր, էջ 1042-1044): Ըստ Անանուն Զրուցագրի՝ հենց այդ աղջիկն էր, որ փրկագնեց Դերենիկի մարմինը և ուղարկեց Վասպուրական (տե՛ս Անանուն Զրուցագիր, էջ 1044), թեև Թովմա Արծրունին դա վերագրում է հայ վաճառականներին, որոնք վերցրին իշխանի դին, իսկ այն պատանեց Դավիթ եպիսկոպոսը և դրեց տեղի եկեղեցում: Այնուհետև Դերենիկի որդի Աշոտը մեկնեց այնտեղ, դին տեղափոխեց Վասպուրական և թաղել տվեց Աղբակի Ս. Խաչ եկեղեցում (տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 237):*

[4] *Տե՛ս Անանուն Զրուցագիր, էջ 1042-1044:*

[5] *Տե՛ս Վարդանյան Վ., Ովքե՞ր էին կարծեցյալ Շապուհ Բագրատունու Դերենները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, № 5, էջ 92:*

[6] *Տե՛ս Եղիազարյան Ա., Աշոտ Ա Բագրատունի. թագավոր հայոց (գահակալության թվականը և թագավորության տարիները), Ե., 2014, էջ 48-52:*

[7] *Անանուն Զրուցագիր, էջ 1052:*

[8] *Նույն տեղում, էջ 1051:*

[9] *Տե՛ս նույն տեղում:*

[10] *Տե՛ս նույն տեղում, էջ 1044:*

[11] *Թովմա Արծրունու և Անանունի տեղեկությունները Դերենիկի սպանության վերաբերյալ համեմատել և տարբերությունները մատնանշել է Նորայր Բյուզանդացին (տե՛ս Նորայր, Քննական ուսումնասիրութիւնք հայ նախնեաց բնագրաց, Ա. Թովմա Արծրունի եւ Անանուն Արծրունի երկու այլեւայլ պատմագիրք են, հատված առաջին, «Բազմավէպ», Վենետիկ, 1905, № 6, էջ 268-269):*

Բագրատունու մասնակցության հարցը չեն քննարկել[1]: Լեոն ևս այդ հարցին չի անդրադարձել, իսկ դավադիրների մեջ ներառել է Պարտավի ամիրա Եմենիկին, Մանազկերտի կայսիկ ամիրային և այլոց[2]: Դերենիկի սպանության վերաբերյալ առանձին հետազոտություն կատարած Վ. Մելիքյանը համարում էր, որ սպանության անպատժելի մնալու իրողությունը ցույց է տալիս, որ դրանում առկա էր «վերին (իմա՛ Աշոտ Բագրատունու-Ա.Ե.) հրամանը»: Նա համարում էր, որ Թովմա Արծրունու և Հովհաննես Դրասխանակերտցու երկասիրություններից բացի խնդրի հանգուցալուծման համար կարևոր է Անանուն Զրուցագրի պատմությունը, որի վրա էլ՝ ընդարձակ մեջբերումներով, հենվում է հետազոտողը՝ Աշոտ Բագրատունուն համարելով դավադրության կազմակերպիչ[3]: Պետք է նշել նաև, որ Վ. Մելիքյանը, Դերենիկի սպանության կազմակերպումը վերագրելով Աշոտ Բագրատունուն, այնուհետև այն համեմատության մեջ է դնում նրա մյուս դստեր ամուսին Սյունյաց Վասակ Գաբուռ իշխանի՝ երիտասարդ հասակում վախճանվելու իրողության հետ[4] և այդ երկու իրադարձությունները դիտարկում Աշոտ Բագրատունու՝ կենտրոնական իշխանության ամրապնդմանն ուղղված քաղաքականության համատեքստում, երբ, ըստ նրա՝ «...երկու այրիները Բագրատունյաց ընտանիքին կը բերէին երկու մեծ տոհմերուն կայքն ու ուժը»[5]: Պարզ է, որ ուսումնասիրողը ընկել է ծայրահեղության մեջ: Վ. Վարդանյանն ընդունում է, որ Դերենիկի սպանությունը կազմակերպել էր Աշոտ Բագրատունին, և դրան որպես պատճառաբանություն ներկայացնում ՝ իշխանաց իշխանի հետ Վասպուրականի գահերեցի՝ հաճախ հաշվի չնստելը, Պարտավի ամիրայի մեքենայությունը և Դերենիկի ամուսնական անհավատարմությունը: Ըստ նրա՝ Հերի և Զարևանդի տերերը դժգոհ էին Դերենիկից, որոնց միջոցով էր Աշոտը սպանել է տալիս նրան՝ ներգրավելով նաև Գագիկ Ապումրվան Արծրունուն[6]: Բ. Հարությունյանը վստահ էր, որ երբ Դերենիկը իրեն ենթարկեց Հերի ամիրայությունը[7], արաբ իշխանավորները հնարավորություն էին փնտրում նրանից ազատվելու: Մյուս կողմից, լարված էին նաև Դերենիկ և Գագիկ Ապումրվան Արծրունիների հարաբերությունները: Դերենիկը նաև մեծ մեղք էր գործել՝ անսերելի Աշոտ Բագրատունու տեսանկյունից. խոսքը Հերի ամիրայի քրոջ հետ սիրային կապի մասին է: Այդ ամենի պատճառով Աշոտ Բագրատունու ցուցումով ամիրան կազմակերպեց Դերենիկ Արծրունու սպանությունը: Իսկ այն, որ Աշոտ Բագրատունին սպանության անուղղակի մասնակիցն էր, պարզվում է այն իրողությունից, որ նա սպանությունը թողել է անպատիժ[8]:

Անհրաժեշտ է շեշտել, որ Դերենիկ Արծրունու սպանությունը հետևանք էր ոչ թե մեկ, այլ մի շարք նպաստող իրողությունների՝ իշխանաց իշխան Աշոտի նկատմամբ Դերենիկի անհնազանդության, Հերի և Զարևանդի արաբ տերերի դժգոհության, Պարտավի ամիրայի խարդավանքների և, ինչպես կտեսնենք, Գագիկ Ապումրվան Արծրունու գահերեցական նկրտումների, որոնք 880-ական թթ. երկրորդ կեսին հանգեցրին Վասպուրականի ինքնավստահ և կամային տիրակալի սպանությանը: Սակայն այստեղ հայ պատմագիտության տեսանկյունից ամենակարևոր հիմնահարցերից մեկը Դերենիկ Արծրունու սպանությանն իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու մեղսակցությունն է: Ըստ լուրերի՝ հենց նա էր կազմակերպել սպանությունը: Այդ լուրերի մասին վկայող Թովմա Արծրունին, ինչպես վերը համոզվեցինք, չէր վստահում դրանց: Ի հավելումն, Դերենիկի սպանության մեջ իշխանաց իշխան Աշոտի մասնակցության մասին խոսք չկա Բագրատունիների նկատմամբ բարեհաճությամբ առանձնապես աչքի չընկնող[9] Արծրունյաց

---

[1] Տե՛ս Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, Վենետիկ, ի Ս. Ղազար, հ. Բ, 1785, էջ 704; Օրմանեան Մ., Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, § 683, սյուն 995-996:

[2] Տե՛ս Լեո. Երկերի ժողովածու, երկրորդ հատոր, Ե., 1967, էջ 507:

[3] Տե՛ս Մելիքեան Վ., Վասպուրականի մեծ իշխան Դերենիկի սպանության պարագան, «Անդաստան արուեստի եւ գրականութեան», Փարիզ, 1953, № 3, էջ 85-93:

[4] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 442:

[5] Տե՛ս Մելիքյան Վ., նշվ. աշխ., էջ 93:

[6] Տե՛ս Վարդանյան Վ., Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը (908-1021 թթ.), Ե., 1969, էջ 34-36:

[7] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 444:

[8] Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 150-152:

[9] Տե՛ս Հովհաննիսյան Պ., Երկու ուղղություն X դարի հայ պատմագրության մեջ, «Հայագիտության հարցեր», 2014, № 2, էջ 110, 114-115 և այլն:

տան Անանուն պատմիչի աշխատության մեջ, իսկ Անանուն Զրուցագիրը, ինչպես տեսանք, սպանությունը վերագրում է Սմբատ Ա թագավորին: Սակայն թե՛ Թովմա Արծրունին և թե՛ Անանուն Զրուցագիրը դավադրության ի կատար ածումը վերագրում են արաբ ամիրային. այստեղ տեղի է ունեցել արաբների կողմից Դերենիկ Արծրունու սպանության փաստի արձանագրում, իսկ Անանուն Զրուցագիրը, հավանաբար վերոհիշյալ լուրերի ազդեցության ներքո, հյուսել է իր պատումը Դերենիկ Արծրունու և արաբ իշխանադստեր սիրո մասին:

Այն, որ ոչ մի, առավել ևս՝ Արծրունյաց տոհմի պատմությունը շարադրող հեղինակ, հավատ չի ընծայել Աշոտ Բագրատունու կողմից Դերենիկ Արծրունու սպանության կազմակերպման տեղեկությանը, հուշում է, որ Աշոտը դրա հետ կապ չի ունեցել: Այլ բան է, որ նա կարողացել է հնարավորինս օգտվել դրա հետևանքներից:

Վերջապես անդրադառնանք Արծրունյաց տան Անանուն հեղինակի տեղեկությանը, որի կարևոր մանրամասները վրիպել են խնդրի քննությամբ զբաղված հետազոտողների տեսադաշտից: Ըստ պատմիչի՝ Դերենիկի մահվան մեջ մեղսակցություն է ունեցել Գագիկ Ապումրվան Արծրունին[1]: Նա Դերենիկի հրամանով ձմեռոց մեկնելու նախօրեին ձերբակալվել էր[2], իսկ Վասպուրականի իշխանի սպանությունից հետո կապանքներից ազատվել իշխանուհի Սոփիի կողմից՝ վերջինիս հայր Աշոտ Ա թագավորի հրամանով[3]: Ի դեպ, ըստ պատմիչի՝ Գագիկ Ապումրվանը Սոփիի քրոջ որդին էր[4], այսինքն՝ Աշոտ Ա-ի թոռը: Կարևոր է այն, որ Արծրունյաց տան Անանուն պատմիչը Դերենիկի սպանության դավադրությունը վերագրում է Գագիկ Ապումրվան Արծրունուն՝ նույն Ապումսրի որդու հետ հետ համագործակցաբար: Անհրաժեշտ ենք համարում պատմիչի տեղեկությունը ներկայացնել ամբողջությամբ. «...դաւողք ոմանք Ատրպատականու, նմանապէս եւ որք ի Հայաստանն էին տանէ, որոց մասնակից էր եւ Գագիկս այս ապստամբ, միշտ խոկային զխաւարայինն իւրեանց կատարել զխորհուրդ: Եւ քանզի ո՛չ ինչ քաջին կարէին ստնանել յայտնապէս՝ ձեռն տուեալ յայր մի, որ էր յոյժ սիրեցեալ իշխանին, որդի Ապումսարայ, ի Խէր քաղաքէ, ...յուշ առնէին եւ զնախանձն հայրենի, զյափշտակութիւն քաղաքաց եւ ստացուածոց, զառումն տանց եւ զքանդումն ամրոցաց, զխորտակումն զաւրաց եւ զբազում արեան հեղումնս ի սրոյ հզաւրին, և զմոլոր աւրէնսդրութիւնն կրաւնիցն Մահումաթայ դածն առաջի արկանէին. եւ այլ ոմանք Հայաստանեայք ինչս եւ պարգևս խոստանային: Այլ զոր աւրինակ ի բազում փայտից զուարճանայ հուր՝ սոյնպէս եւ այրս այս՝ ի խոստմանց և յուխտից աստի, մինչեւ հրապուրեցին, եւ նովաւ դաւաճանեալ զմահուն գործեցին դարան»[5]: Ի՞նչ է սա, եթե ոչ իրադարձությունների հստակ շարադրանք՝ դավադիրների ուղղակի մատնանշումով: Գագիկ Ապումրվանն ու համախոհները Հերի ամիրային հիշեցրել են Դերենիկի կողմից ամիրայության ենթարկման[6] մանրամասները՝ նրա մեջ արթնացնելով վրեժխնդրություն և ներքաշել դավադրության մեջ, որի հետևանքով սպանվել է Դերենիկ Արծրունին: Ճիշտ է՝ ըստ հեղինակի ոչ հասցեական հաղորդման՝ դավադրությանը մասնակցել էին նաև այլ անձինք «ի Հայաստանն ... տանէ», որոնք պարգևներ էին խոստանում ամիրային, եթե նա գլուխ բերեր Դերենիկի սպանությունը, սակայն պատմիչն անուններ չի տալիս, ինչը հուշում է, որ խոսքը չէր կարող լինել Աշոտ Բագրատունու մասին, այլ միայն Գագիկ Ապումրվանի վասպուրականյան գործակիցների մասին: Ավելին, հավանական է, որ «ի Հայաստանն ... տանէ» Գագիկ Ապումրվանից բացի այլ դավադիրների մասնակցությունը պարզապես հեղինակի ենթադրությունն է, որը ծնվել էր Գագիկ Ապումրվանի կողմից Դերենիկին վտանգի մասին նախազգուշացնելու իրողությունից:

Այսպիսով՝ փաստենք, որ Արծրունյաց տան Անանուն պատմիչը հենց Գագիկ Ապումրվանին է համարում դավադրության կազմակերպիչ, ինչը և համապատասխանում է իրականությանը:

---

[1] *Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 265:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 235, 265: Հմմտ. Անանուն Զրուցագիր, էջ 1043-1044: Հետաքրքիր է, որ խոսելով այն մասին, թե ինչպես է Դերենիկը Գագիկ Ապումրվանին ձերբակալել անհնազանդության մեջ նրան մեղադրողներին անսալով, Թովմա Արծրունին նշում է, որ չգիտե՝ ստու՞յգ էր անհնազանդության մեղադրանքը, թե՞ ոչ: Իսկ Արծրունյաց Անանուն պատմիչը մեղադրանքը կասկածի չի ենթարկում: Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 265:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 235:*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 269:*

[5] *Նույն տեղում, էջ 265:*

[6] *Հմմտ. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 444:*

Կարևոր է այն, որ սպանության մեղսակիցների մեջ Գագիկ Ապումրվանին նշմարում է նաև Անանուն Զրուցագիրը, թեև, ըստ նրա՝ Դերենիկի հրամանով ձերբակալվելուց հետո նա իբր թե համոզել է իշխանին՝ չմեկնել Հերի կողմերը:

Իսկ թե ո՞վ է տարածել Դերենիկի սպանության մեջ Աշոտ Բագրատունու մեղսակցության մասին կեղծ լուրը, կարծում ենք, որ դա կարող էր լինել միայն խիստ շահագրգիռ մի անձ, և այդ անձը Գագիկ Ապումրվանն էր: Իսկ պատճառն այն էր, որ նա ձերբակալվել էր Դերենիկ Արծրունու հրամանով ձմեռով մեկնելու նախօրեին, որով դավադրության իրագործումը կասկածի տակ էր ընկել: Վտանգի մասին լուր ուղարկելով Դերենիկին՝ Գագիկ Ապումրվանը, փաստորեն, հերթական խորամանկությունն էր անում, քանի որ գիտեր, որ դավադրության անհաջողության դեպքում կյանքով էր պատասխան տալու:

Ստացվում է, որ Անանուն Զրուցագրի տեղեկությունները պարունակում են ստույգ տվյալներ, և իշխանների կողմից Դերենիկին հորդորելը՝ սպասելու դավադրության մասին ստացված լուրերի ճշտմանը, վերաբերում է հենց Գագիկ Ապումրվանի ուղարկած տեղեկությանը: Դերենիկը լուրին չհավատաց, մեկնեց և Հերի տարածքով անցնելիս՝ դավադրաբար սպանվեց:

Ի վերջո, ներկայացնենք հետազոտողների կողմից աննկատ մնացած՝ Արծրունյաց տան Անանուն պատմիչի ևս մեկ կարևոր տեղեկություն, որը լիովին ցրում է Դերենիկի սպանությանը Աշոտ Բագրատունու մեղսակցության վերջին կասկածները: Նկարագրելով Գագիկ Ապումրվանի սպանությունը՝ նա գրում է, որ Դերենիկի որդի Գագիկը «... առնու զվրէժ արեան հաւր իւրոյ ի գլխոյ Ապումրուանայ: Վասն զի եւ նա մի էր ի գործակցաց չարին...»[1]: Ումից են առնում արյան վրեժը, եթե ոչ գլխավոր հանցագործից, սպանողի («չարի») հիմնական գործակցից:

Իսկ Գագիկ Ապումրվան Արծրունին՝ այդ չափազանց խորամանկ անձը, ազատ արձակվեց Դերենիկ Արծրունու սպանությունից անմիջապես հետո և Աշոտ Ա-ի կողմից նշանակվեց Վասպուրականի ոստիկան, ինչն էլ հավանաբար ազդել է Բագրատունի տիրակալին Դերենիկի սպանության կազմակերպումը վերագրող հետազոտողների կասկածների կարծրացման վրա:

Տարիներ անց՝ 906 թ., երբ Երազգավորսում Գուրգեն Արծրունուն հայտնեցին, որ նրա հայր Դերենիկ Արծրունուն սպանել են Սմբատ Ա-ի հրամանով, իշխանն արագորեն լուրը հասցրեց եղբորը՝ Գագիկ Արծրունուն: Հոր սպանության ժամանակ նրանք երեխաներ էին, և դժվար է ասել՝ տեղյա՞կ էին արդյոք, թե՞ միայն 906 թ. իմացան այդ մասին, հավատացի՞ն դրան, թե՞ ոչ: Գուցե Դերենիկի սպանությունից 20 տարի անց՝ ժամանակին նույնիսկ նրա կողմից անվստահելի համարված լուրն այժմ հավանակա՞ն էր թվացել նրա որդիներին: Ըստ Անանուն Զրուցագրի՝ Գագիկ Արծրունին եղբորն ասել է. «...պարտ է մեզ վճառել զարիւն հաւրն մերոյ Դերենին»[2]: Անկախ նրանից՝ ասե՞լ է արդյոք նման բան, թե՞ ոչ, բայց դրանից հետո, նաև այլևայլ իրողությունների ազդեցությամբ, Բագրատունիների և Արծրունիների հարաբերություններն արագորեն լարվեցին, և այն աստիճան, որ 908 թ. Գագիկ Արծրունին թագ ընդունեց Ատրպատականի ամիրա Յուսուֆից, իսկ արդեն 909-912 թթ. դեպի Հայաստան Ատրպատականի զորքի արշավանքի ժամանակ գործակցեց նրան ընդդեմ Սմբատ Ա-ի[3]:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՎԵՐԱՃՎԵԼԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԱՐՔՈՒՆԻՔԻՑ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ

Աշոտ Բագրատունին լավագույնս օգտագործեց Դերենիկի սպանությունից հետո ստեղծված իրադրությունը՝ Վասպուրականում արքունի ուղղակի կառավարում մտցնելու համար:

Թովմա Արծրունին տեղեկացնում է, որ 887 թ.՝ Դերենիկի մահվան կապակցությամբ 10 ամիս տևած սգից հետո, թագավոր հռչակված Աշոտ Բագրատունին ուղարկեց իր որդի Շապուհին, ով իշխանությունը հանձնեց ավագ իշխանազուն Աշոտին, բայց քանի որ նա դեռ չափահաս չէր, ոստիկան նշանակեց Գագիկ Ապումրվան Արծրունուն[4]: Իսկ Արծրունյաց Անանուն պատմիչը տեղեկացնում է, որ ամուսնու մահվանից հետո Դերենիկ Արծրունու կինը՝ Սոփին «առնաբար ունի

---

[1] *Թովմա Արծրունի և Անանուն, էջ 271:*
[2] *Անանուն Զրուցագիր, էջ 1052:*
[3] *Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 280-283; Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 490-500:*
[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 237:*

զիշխանությունն, աւգնականութեամբ հաւր իւրոյ Աշոտոյ թագաւորին Հայոց»[1]: Պետք է կարծել, որ Աշոտ Արծրունու՝ պատանի լինելու պատճառով նրա խնամակալն էր դարձել մայրը՝ Սոփին, իսկ արքունիքի կողմից երկրամասում ոստիկան էր նշանակվել Գագիկ Ապումրվանը:

Փաստորեն Աշոտ Ա-ն Վասպուրականում արքունիքի կողմից ուղղակի կառավարում է մտցրել, բայց, որ այն ցավագին չընկալվի, ոստիկան է նշանակել Արծրունյաց տոհմի ներկայացուցչի՝ քաջագործություններով հայտնի Վահան Արծրունու որդուն[2]: Ըստ Թովմա Արծրունու՝ Գագիկ Ապումրվանի նշանակումը Վասպուրականի տերերի կողմից միանշանակ չի ընդունվել. «...թէպէտ եւ տածէր եւ խնամէր Գագիկ աշխարհիս, այլ ոչ ուրախ լինէին ի նա ազատատերանցն գրոխք, եւ կացին ի տարակուսի»[3]: Հավանաբար նաև այս պատճառով Աշոտ Ա թագավորն անձամբ այցելեց Վասպուրական, պատմիչի խոսքով՝ «մխիթարել զդուստր իւր եւ զթոռունս, եւ եւս առատանայր զհաստատութիւն իշխանութեանն Աշոտի եւ զոստիկանութիւնն Ապումրուանայ»[4]: Փաստորեն Աշոտ Ա-ն իր այցով ամրապնդել է նաև Գագիկ Ապումրվանի ոստիկանությունը: Իսկ Աշոտ Ա-ի վստահությունը Գագիկ Ապումրվան Արծրունու նկատմամբ հասկանալի էր, չէ՞ որ նա իր թոռն էր:

Ակնհայտ է, որ Գագիկ Ապումրվանի պաշտոնը՝ ոստիկանությունը, չի կարող մակաբերվել որպես «Վասպուրականի տիրակալ», «խնամակալ»[5] կամ «իշխանապետ»[6]: Առհասարակ, «ոստիկան»-ը ունի «վերակացու», «տեսուչ» և նման այլ նշանակություններ[7], իսկ արաբական տիրապետության շրջանում հայ պատմիչներն այդպես էին կոչում Արաբական խալիֆայության կողմից Հայաստանում և այսրկովկասյան երկրներում նշանակվող փոխարքա-կառավարչին: Այսինքն՝ ոստիկանի պաշտոնը հավասարազոր էր պարսկական տիրապետության շրջանում Հայաստանում նշանակվող մարզպանի պաշտոնին[8]: Ուստի այստեղ կարելի է խոսել բացառապես Գագիկ Ապումրվանի՝ Աշոտ Բագրատունու կողմից Վասպուրականում արքունի վերակացու նշանակվելու մասին:

Այն, որ Գագիկ Ապումրվանը եղել է միայն արքունի վերակացու Վասպուրականում, հաստատվում է Արծրունյաց տան Անանուն պատմիչի այն տեղեկությամբ, որ Արծրունյաց տոհմի ներկայացուցիչներից ոմանք փորձել են խլել Դերենիկի որդիների ժառանգությունը, բայց Աշոտ Ա-ի ահից չեն համարձակվել: Նրանցից Գագիկ Ապումրվանը Աշոտ Ա-ի մահից հետո «կամեցաւ տիրել իշխանութեանն Վասպուրականի»[9], ասել է՝ նա Վասպուրականի իշխան չէր, այլ զուտ արքունիքի կողմից նշանակված վերակացու՝ ոստիկան, որը փորձում էր ստանալ «գահակալութիւն ի վերայ աշխարհիս (իմա՛ Վասպուրականի-Ա.Ե.)»՝ այդ ճանապարհին ձերբակալելով ու մեկուսացնելով Դերենիկ Արծրունու երեք որդիներին[10], որոնցից ավագը՝ Աշոտը, իր փեսան էր[11]: Այդ նկրտումները Գագիկ Ապումրվանը որդեգրեց այն բանից հետո, երբ իր փեսա Աշոտը, առանց Սմբատ Ա թագավորի համաձայնության, մեկնեց Ատրպատականի ամիրա Աֆշինի հետ հանդիպման՝ ըստ վերջինիս հրավերի[12]: Թերևս պատճառն այն էր, որ Գագիկ Ապումրվանը, հավակնելով գահերեցության Վասպուրականում, նախօրեին ռազմակալել էր Վասպուրականի որոշ հատվածներ՝ Նկան ամրոցը՝ Թոռնավան գավառում, Կոտոր ամրոցը՝ Ընծայից ձորում և Սևան

---

[1] *Նույն տեղում, էջ 269:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 166, 227:*

[3] *Նույն տեղում, էջ 237:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Տե՛ս Լեո. Երկերի ժողովածու, էջ 509; Մելիքյան Վ., նշվ. աշխ., էջ 92; Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 38-39:*

[6] *Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 153:*

[7] *Տե՛ս «Նոր բառգիրք հայկական լեզուի», հ. երկրորդ (Հ-Ֆ), Ե., 1981, էջ 523:*

[8] *Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Դիտողություններ «ոստիկան» բառի մասին, «Պատմաբանասիրական հանդես», 1962, № 4, էջ 243; Եղիազարյան Ա., Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Ե., 2010, էջ 30:*

[9] *Թովմա Արծրունի և Անանուն, էջ 270:*

[10] *Տե՛ս նույն տեղում, էջ 242, 270:*

[11] *Տե՛ս նույն տեղում, էջ 270: Աշոտն ամուսնացել էր Գագիկ Ապումրվանի դստեր հետ դեռևս հոր կենդանության օրոք, փաստորեն, պատանի հասակում (տե՛ս Անանուն Ժրուցագիր, էջ 1043):*

[12] *Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 241:*

ամրոցը՝ Լմբա փորում[1]: Հովհաննես Դրասխանակերտցին համարում է, որ Աշոտը պառակտվել է և դրժել Սմբատ Ա-ի հետ ունեցած դաշինքի ուխտը[2]: Սմբատ Ա-ն արգելեց Աշոտին մեկնել Ատրպատականի ամիրայի հետ հանդիպման, բայց անարդյունք: Այնժամ թագավորը բարկությամբ Վասպուրականի երկու ազդեցիկ իշխանների՝ Գուրգեն Անձևացուն և Գագիկ Ապումրվանին թույլատրեց տիրել Վասպուրականին[3]: Հետաքրքրական է Թովմա Արծրունու վերլուծությունը Սմբատ Ա-ի այդ քայլի դրդապատճառի մասին: Ըստ նրա՝ «...թագաւորն Հայոց Սմբատ անպատկան վարկանելով զերթալն Աշոտի առ Ափշին, մի՛ գուցէ արդեւք եւ այլք դրդուիցին յիշխանացն զնորայն հետեւել ուղեւորութիւն, եւ յարգելուլն զԱշոտ՝ չանսաց ումեք»[4]: Փաստորեն, Սմբատ Ա-ն համարել է, որ Աշոտ Արծրունու քայլը կարող է վարակիչ լինել Բագրատունյաց արքունիքից դժգոհ այլ իշխանների համար, ուստի խստագույն պատիժ է տվել Աշոտին՝ զրկելով Վասպուրականի գահերեցությունից:

Երկու իշխաններն Աշոտ Արծրունու բացակայությամբ ռազմակալեցին Վասպուրականը, իսկ Վան բերդաքաղաքը պաշարելով՝ գրավեց Գագիկ Ապումրվանը: Ատրպատականի ամիրա Աֆշինը, ով անընդհատ դավեր էր նյութում Բագրատունյաց թագավորության դեմ, արագորեն օգտվեց կատարվածից ու զորք տրամադրեց Աշոտ Արծրունուն՝ իշխանությանը վերատիրելու համար: Աշոտը վերադարձավ Աֆշինի օգնական զորքով և հետ գրավեց իր տիրույթները: Խորամանկ Գագիկ Ապումրվանն այստեղ ևս հաջողեց՝ համոզելով նրան, թե տիրել է Վասպուրականի հողերին, որպեսզի թույլ չտա դրանց գրավումը Գուրգեն Անձևացու կողմից: Վերջինս շուտով զոհ գնաց դժբախտ մի պատահարի, իսկ Գագիկ Ապումրվանը «երկնէր գայր զիշխանասիրականն ծնանել գահակալութիւն ի վերայ աշխարհիս», ուստի կարճ ժամանակում նվաճելով երեք Արծրունի եղբայրների վստահությունը, ձերբակալեց նրանց՝ արգելափակելով Աշոտին՝ Նկան, Գագիկին՝ Սևան և Գուրգենին՝ Կոտոր բերդերում[5]: Այդպիսով նա սկսեց իշխել Վասպուրականում: Պարզ է, որ այս ամենը չէր կարող կատարվել առանց Սմբատ Ա թագավորի համաձայնության, իսկ այն, ելնելով վերոշարադրյալից, միանշանակ առկա էր: Դրա հիմնավորումն է այն, որ այնուհետև Սմբատ Ա-ն Գագիկ Ապումրվանին կարգեց Վասպուրականի իշխան. «Անդանօր եկեալ Շապուհ եղբայր թագաւորին, և կացուցանէ զԳագիկ՝ իշխան Վասպուրական տէրութեանն. մանաւանդ զի փեսայացուցեալ էր Շապհոյ զԳագիկ ի դուստր իւր»[6]: Պատմիչը փորձում է այդպիսով ընդգծել, որ Գագիկ Ապումրվանը օգտագործել է իր փեսայի հնարավորությունները՝ սեփական իշխանատենչությանը հագուրդ տալու նպատակով:

Սակայն Վասպուրականի մի շարք իշխաններ՝ Տրունյաց, Աբելինից, Ակեացի և Անձևացի, չեն համակերպվում այդ իրողությանը և օգնության համար մեկնում են Ամիդ, որի տիրակալ Ահմադը մինչ այդ տիրել էր Տարոնին: Ահմադը նրանց ընդունեց, քանի որ ցանկանում էր պառակտել հայոց թագավորության ուժերը և դրանով իսկ հեռացնել Սմբատ Ա-ից եկող սպառնալիքը, ով այդ ժամանակ պահանջում էր նրանից՝ թողնել Տարոնը[7]:

Փաստորեն, Գագիկ Ապումրվանի՝ Վասպուրականի իշխանության նկատմամբ հավակնությունները կյանքի կոչելու գործընթացը սկիզբ առավ հենց Սմբատ Ա-ի օրոք, երբ Վասպուրականի ոստիկանը կարողացավ օգտագործել հայոց արքայի և Աշոտ Արծրունու միջև առաջացած հակամարտությունը: Ավելին, Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ Սմբատ Ա-ն այնքան էլ համամիտ չէր, որ Գագիկ Ապումրվանը իշխի Վասպուրականում, բայց քանի որ նա, ի տարբերություն Աշոտ Արծրունու, «միամտութեամբ սրտի հնազանդեալ նուաճէր ընդ լծով ծառայութեան արքայի»[8], թագավորության միասնականությունը պահպանելու համար դրույքը կատարում էր հենց նրա վրա:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 240:
[2] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 463:
[3] Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 241:
[4] Նույն տեղում, էջ 241:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 242:
[6] Նույն տեղում, էջ 243:
[7] Տե՛ս նույն տեղում:
[8] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 464; Անանուն Ժրուցագիր, էջ 1045:

ԳԱԳԻԿ ԱՊՈՒՄՐՎԱՆԻ ԴԱՎԱՃԱՆԵԼԸ ՍՄԲԱՏ Ա-ԻՆ ԵՎ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գագիկ Ապումրվանը Վասպուրականում իշխեց մինչև 897 թ.:

896 թ. Ամիդի ամիրան տիրեց Տարոնին[1]: Սմբատ Ա-ն Ամիդի ամիրայից պահանջեց հեռանալ Տարոնից, սակայն վերջինս չկատարեց պահանջը: Արդեն 897 թ. Սմբատի հրամանով հավաքվեցին հայոց, վրաց ու աղվանից զորքերը, և հայոց արքան արշավանքի դուրս եկավ[2]: Նրա բանակը Գագիկ Ապումրվանի դավաճանության պատճառով ծանր պարտություն կրեց Թուղխ գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում[3]: Գագիկ Ապումրվանը, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ նախապես պայմանավորվել էր Ամիդի ամիրա Ահմադի հետ և Սմբատ Ա-ի զորքը դիտմամբ տարել անջուր ու քարքարուտ վայրերով, որի հետևանքով զինվորները հյուծվել էին: Այդ վիճակում նրանց վրա գրոհեց ամիրայի զորքը: Ճակատագրական պահին Սմբատ Ա-ն մարտի մեջ մտավ և անձնական քաջությամբ հաջողության նժարը թեքեց իր զորքի կողմը: Բայց դարձյալ Գագիկ Ապումրվանը դիմեց դավաճանության՝ իր զորագնդով լքելով մարտի դաշտը[4]:

Վերևում ներկայացվածի համատեքստում հույժ հետաքրքրական է, թե ինչու՞ Գագիկ Ապումրվանն ի վերջո դավաճանեց Սմբատ Ա-ին, քանի որ իրադարձությունների բերումով օգտվում էր նրա բարեհաճությունից: Ակնհայտ է, որ իրականում նա այնքան էլ վստահ չէր, որ Դերենիկի որդիների՝ Սմբատ Ա-ին հավատարմություն ցուցաբերելու պարագայում, իր նկատմամբ Բագրատունի գահակալի բարեհաճությունը կմնա անխախտ:

Պարտված Սմբատ Ա-ն նահանջելով հասավ Վան, իսկ այնտեղից՝ հեռացավ Բագրևանդ գավառը[5]: Երկու օր անց Վանում հայտնվեց Գագիկ Ապումրվանը՝ հուսով, որ իր արարքը ոչ ոք չի իմացել: Նա նույնիսկ Գագիկ Արծրունուն հանեց բանտից՝ դրանով իսկ ակամա հնարավորություն տալով երիտասարդ իշխանազունին՝ իրականացնելու վրեժի ծրագիրը: Վերջինս Ամատունյաց և Վահունյաց տոհմի իշխանների հետ Վանում հրապարակավ սրախողխող արեց Գագիկ Ապումրվանին, կտրեց նրա գլուխը և այն վերցրած՝ մեկնեց եղբայրներին ազատելու բանտերից[6]: Երբ այդ մասին իմացավ Սմբատ Ա-ն, սահմանեց, որ Գագիկ Ապումրվանի սպանությունը արդարացի է, պարգևներ ու պատիվներ մատուցեց Վասպուրականի իշխան Աշոտին և պետական բարձր պաշտոններ շնորհեց Գագիկին ու Գուրգենին[7]:

Հետաքրքրական մանրամասներ է պարունակում Գագիկ Ապումրվանի դավաճանության վերաբերյալ Անանուն Ձրուցագիրը: Ըստ նրա՝ Գագիկ Ապումրվանը Մոսուլի (Ամիդի) ամիրայի հետ պայմանավորվել էր, որ Սմբատի հետ հակամարտության դեպքում օգնելու է ամիրային: Սակայն նա ընդհանրապես չի ժամանում մարտադաշտ, իսկ այնուհետև, Սմբատ Ա-ի զորքի պարտությունից հետո, երբ Ռշտունիքում հանդիպում է նրան, վերջինս նրան մեղադրում է ճակատամարտից ուշանալու համար: Այդ ժամանակ Դերենիկի որդի Գագիկը նրա դավաճանության մասին պատմում է Սմբատ Ա-ին: Նա էլ Գագիկին ասում է, որ հասել է սեփական ժառանգությանը տիրելու ժամանակը, այսինքն՝ մղում է, որ երիտասարդ իշխանազունը ոչնչացնի դավաճան իշխանին: Այնուհետև նա Վասպուրականի մի քանի իշխանների հանձնարարում է սպանել Գագիկ Ապումրվանին և երկրամասի իշխանությունը հանձնել Գագիկ Արծրունուն: Հաջորդ օրը Գագիկ Ապումրվանին Վասպուրականի իշխանները սպանում են որսի ժամանակ[8]:

Նրա սպանությունից հետո Սմբատ Ա-ն Վասպուրական ուղարկեց իր եղբայր Դավթին՝ համոզելու Աշոտ Արծրունուն՝ թշնամություն չպահել և չմեկուսանալ իրենից[9]: Հետագա իրադար-

---

[1] *Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 465:*

[2] *Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 366-368:*

[3] *Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 466: Նշված դեպքերի ժամանակագրությունը տե՛ս Եղիազարյան Ա., Հայոց Սմբատ Ա. թագավորի գահակալության շրջանի ժամանակագրությունը, «Էջմիածին», պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2014, № Ե, էջ 42-45:*

[4] *Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 465-466:*

[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 466:*

[6] *Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև Թովմա Արծրունի և Անանուն, էջ 245:*

[7] *Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 245:*

[8] *Տե՛ս Անանուն ցրուցագիր, էջ 1047:*

[9] *Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 272:*

ձությունները ցույց տվեցին, որ տեղի ունեցածի դառնությունն այդպես էլ չանցավ, որի հետևանքով Վասպուրականի իշխանությունն աստիճանաբար մեկուսացավ Բագրատունյաց թագավորությունից և ի վերջո հակադրվեց նրան:

ԱՄՓՈՓՈՒՄ

886-897 թթ.՝ ավելի քան 10 տարի, Գագիկ Ապումրվան Արծրունին տարբեր խորամանկ հնարներով, կանգ չառնելով նույնիսկ դավաճանության առաջ, իշխեց Վասպուրականում՝ սկզբում որպես արքունի վերակացու, իսկ այնուհետև որպես երկրամասի իշխան, սակայն ի վերջո արյան վրեժի զոհ դարձավ:

Ի սկզբանե Գագիկ Ապումրվանի փառասիրական նկրտումների ճանապարհին կանգնած էր հզոր իշխան Դերենիկ Արծրունին: Վերջինս դավադրական սպանությունը կազմակերպելուց հետո Գագիկ Ապումրվանը կարողացավ իշխանաց իշխան Աշոտին ներկայանալ որպես Բագրատունյաց արքունիքին հնազանդորեն ծառայելու պատրաստ անձ՝ նշանակվելով ոստիկան Վասպուրականում: Աշոտ Ա-ի մահից հետո նա փորձ կատարեց արքունի վերակացուի իր կարգավիճակից անցում կատարել երկրամասի լիարժեք տիրոջ կարգավիճակի և ճանապարհից հեռացնել այս անգամ արդեն Դերենիկի որդի Աշոտ Արծրունուն, սակայն ի վերջո անհաջողության մատնվեց: Սմբատ Ա-ն, որ նրա միջոցով փորձ էր կատարել պատժելու Աշոտ Արծրունուն, անհաջողությունից հետո նրան այլևս ամբողջությամբ չէր վստահում, ուստի նրան նոր հովանավոր էր անհրաժեշտ: Վերջինիս փնտրտուքը նրան կյանք, իսկ Բագրատունյաց թագավորությանը՝ ծանր պարտություն արժեցավ:

Գագիկ Ապումրվանի վարմունքը ծանր հետևանքներ ունեցավ նաև Բագրատունիների և Արծրունիների հարաբերություններում՝ ի վերջո հանգեցնելով երկարամյա հակամարտության և հայոց թագավորության պառակտման:

Арман Егиазарян, О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА. Целью статьи является новое толкование обстоятельств убийства князя Васпуракана Дереника Арцруни. Для достижения цели поставлена задача изучить более широкий событийный и хронологический диапазон. Статья основана на историко-критическом методе исследования. Была проанализирована информация по данному вопросу, затем был изучен реальный ход событий путем обобщения и сравнения. В статье подчеркивается факт, что во второй половине IX века, когда Армения во главе с Ашотом Багратуни уверенно шла к восстановлению царства, внезапно возникла угроза раскола со стороны князя Васпуракана Дереника Арцруни.

Правитель Васпуракана, который ранее следовал указаниям Ашота Багратуни, начал действовать самостоятельно. Но осенью 886 года он был убит в результате заговора, который, по слухам, готовился по приказу Ашота Багратуни, но сам Дереник не поверил слухам. Историк Товма Арцруни также не верил этим слухам.

В статье обосновывается, что Ашот Багратуни не участвовал в заговоре с целью убийства Дереника Арцруни, однако умело воспользовался сложившейся ситуацией и ввел прямое правление в Васпуракане, назначив царского чиновника.

К сожалению, убийство Дереника Арцруни впоследствии привело к расколу Армянского царства.

Ключевые слова: *заговор, событие, Васпураканское княжество, князь князей, Дереник Арцруни, убийство, соучастие, губернатор, повествование, предательство.*

Arman Yeghiazaryan, ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM. The purpose of the article is a new interpretation of the circumstances of the assassination of the Prince of Vaspurakan Derenik Artsruni. To achieve the goal, the

task was set to include a more complete event and chronological frame. The article is based on the historical-critical research method. Information on this issue was analyzed, and then the real course of events was studied through synthesis and comparison. The article highlights the fact that in the second half of the IX century, when Armenia, headed by Ashot Bagratuni was confidently moving towards restoring the kingdom, suddenly appeared a threat of a split on the part of Prince of Vaspurakan Derenik Artsruni.

The ruler of Vaspurakan, who had previously followed the instructions of Ashot Bagratuni, began to act independently. But in the fall of 886, he was killed in a conspiracy. Rumour had it that the conspiracy was organized by order of Ashot Bagratuni, but Derenik himself had not believed it. Tovma Artsruni, the historian of the house of Artsruni also did not believe it.

The article substantiates that Ashot Bagratuni did not participate in the act of assassination of Derenik Artsruni, but skillfully took advantage of the situation and introduced direct rule in Vaspurakan, where a royal official was appointed.

Unfortunately, the assassination of Derenik Artsruni later led to the split of the Armenian Kingdom.

Key words: *conspiracy, event, Principality of Vaspurakan, prince of princes, Derenik Artsruni, murder, complicity, governor, narrative, betrayal.*